



Ա երաժշտութեան կոմիտեի անդամ Հայոց
Համազարթ և առաջ քահանա բարձրագույն
Անկար պարտիայի պարտականութեան վահանական
Սահմանադրութեան պարտականութեան
Անկար հայոց գումարան գումարան պարտականութեան
Անկար հայոց գումարան պարտականութեան
Անկար հայոց գումարան պարտականութեան

ԱՐՑԱԽ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Ներկայ ժամանակներու համաշխարհային աղէտի՝ պսակաժահրի անբացատրելի ծագման եւ տարածման պատճառով առաջացած «տնային կալանք»ի պայմաններուն մէջ անգամ փափաքելով մեծարել Հայոց Նահապետի՝ Հ. Ղեւոնդ Վրդ. Մ. Ալիշանի ծննդեան երկուհարիւր ամեակը, ՀՀ ԳԱ Ակադեմիան եւ Միթարեան միաբանութիւնը եռօրեայ առցանց գիտաժողով կազմակեցին մեծանուն վարդապետի յիշատակին:

Գիտաժողովին բացման խօսք ուղղեց մասնակիցներուն ՀՀ ԳԱԱ Նախագահ Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսեանը:

«Արթեւրել Հ. Ղեւոնդ Ալիշանի յիշատակը նշանակում է յետադարձ հայեացք նետել մեր ժողովրդի անցած պատմական ուղուն, ստեղծած մշակուրային անանց արժեքներին եւ գրականութեանը, ինչպէս նաև այդ ամէնի ուսումնասիրման գործում արժեւորել Միթարեան միաբանութեան դերը, որովհետեւ ինչպէս իրաւացիօրէն նշանէլ է տարբեր հետազօտողների կողմից, Ալիշանը դարձաւ Միթարեան հայագիտութեան եւ Միթարեանների ստեղծած ողջ գրականութեան հանրագրումարք: ... Գիտաժողովն առաւել ցայտուն վեր կը հանի հայ գրականութեան եւ հայագիտութեան զարգացման գործում Ալիշանի ունեցած դերը, կ'ընդգծուի այն ներդաշնակ միասնութիւնը, որ կայ Ալիշան գրողի, գիտնականի եւ հայրենասէրի միջն, որ պայմանաւորեց նրա անանց հմայքը»:

Ողջոյնի ելոյթներով հանդէս եկան ՀՀԳԱԱ Հայագիտութեան եւ հասարակական գիտութիւնների բաժանմունքի ակադեմիկոսքարտուղար Յուրի Սուվարեանը, Միթարեան միաբանութեան քահանայապետական պատվիրակ, ՀՀԳԱԱ արտասահմանեան անդամ Տ. Լեւոն արքեպիսկոպոս Զեքիեանը, Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէն, պատմական գիտութիւններու Դոկտոր Վահան Տէր-Ղեւոնդեանը, Հայաստանի գրողներու միութեան քար-

տուղար բանասիրական գիտութիւններու Դոկտոր Պետրոս Դեմիքճեանը: Այնուհետեւ տեղի ունեցաւ Մխիթարեան միաբանութեան Հ. Վահան վարդապետ Օհաննեանի՝ Հ. Ղեւոնդ Ալիշանի նամակագրական ժառանգութիւնն ամփոփող ժողովածուի ելեկտրոնային տարբերակի չնորհանդէս-ներկայացումը: Ցուցադրուեցաւ Հ. Ղեւոնդ Ալիշանին նուիրուած վաւերագրական տեսանիւթ, որ պատրաստուած էր Վենետիկի մէջ:

Եռօրեայ գիտաժողովին մասնակցեցան ՀՀԳԱԱ ինստիտուտներու, տարբեր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու, Մխիթարեան միաբանութեան, Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերու գիտահետազօտական ինստիտուտի գիտաշատողներ, վարդապետներ:

Հ. Ղեւոնդ Ալիշանի նուիրուած այս գիտաժողովը կ'ուզէ նոր սկիզբ դառնալ Հայոց Նահապետի գիտագրական ժառանգութեան ուսումնասիրութեան եւ հրատարակութեան գործին:

Հ. ՍԵՐՈԲ ՎՐԴ. ԶԱՄՈՒՐԼԵԱՆ